ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՏԻՆՅԱՆ ԱՆԻ ՌՈՄԻԿԻ

ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2017թ.

Ատենախոսության թեման հաստատվել է
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ծովինար Ջիվանի Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հարություն Ալեքսանի Մարզպանյան

տնտեսագիտության թեկնածու,
Սուսաննա Բենիամինի Եղիազարյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ.-ի հուլիսի 13-ին, ժամը 14^{00}-ին Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 060 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0037 ք.Երևան, Դավիթ Անհաղթի 10

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ.-ի հունիսի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ **տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վ.Վ. Խաչատրյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Արդի ժամանակաշրջանում սոցիալական կայունությանն ուղղված քաղաքականությունն ավելի բարդ հիմնախնդիրների հետ է առնչվում, քանի որ անընդհատ մեծանում է մարդկային կապիտալի տեսակարար կշիռը: Ավանդական լուծումներն ու կարգավորումներն արդիական համարել դժվար է, քանի որ սոցիալական ոլորտի մարտահրավերներն ավելի արագ տեմպերով են զարգանում, իսկ եկամուտների աճն ավելի դանդաղ ընթացք ունի, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում փնտրել սոցիալական ոլորտի հիմնախնդիրների բացահայտման և կարգավորման նոր ուղղություններ և մոդելներ:

Զարգացած երկրներում սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի կիրառումը հասնում է զգալի չափերի, իսկ ՀՀ-ում այն գտնվում է սաղմնային փուլում: ՀՀ-ում գոյություն ունեցող ինովացիոն ներուժը և երկարատև սոցիալական ինովացիոն ծրագրերի ներդրման ցածր մակարդակն ակնհայտ է: Աշխատանքում ներկայացված են այն համալիր միջոցառումները, որոնք պարտադիր են այս խնդիրները հաղթահարելու համար: Սոցիալական ինովացիաների կիրառման արդյունքում հնարավոր կլինի լուծել ՀՀ սոցիալական ոլորտին առնչվող կարևոր հիմնահարցեր, որոնք միաժամանակ զգալի պետական ֆինանսական միջոցների կենտրոնացման հետ կապված չեն լինի: ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիաների ներդրումը կարող է կիրառելի դառնալ, դրա հիմքերի գիտական ուսումնասիրության ու գնահատման արդյունքում: Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացների կառավարման հիմնախնդիրների հետազոտության անհրաժեշտությամբ, սոցիալական բազմաթիվ հիմնախնդիրների լուծման կարևորությամբ ու հրատապությամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն ինովացիոն գործընթացների ձևավորման և կառավարման առկա հիմնախնդիրների բացահայտումն է, սոցիալական ինովացիաների արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունների ու մեխանիզմների մշակումը և դրանց ներդրման ուղիների բացահայտումը: Ուսումնասիրության շրջանակներում տարանջատվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել ինովացիաների և ինովացիոն գործընթացների էությունը, տեսամեթոդական հիմքերը:
- Հետազոտել ՀՀ սոցիալական համակարգի առանձնահատկությունները, ինչպես նաև ինովացիոն գործընթացների հետ փոխկապվածությունը:
- Ուսումնասիրել ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի կառավարման միջազգային փորձը:

- Ներկայացնել ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիաների ներդրման ուղղությամբ միջազգային փորձի կիրառման հնարավորություններն ու հեռանկարները:
- Հետազոտել սոցիալական գործընկերությունը և ներկայացնել կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը՝ որպես սոցիալական ինովացիայի ներդրման մոդել:
- Բնութագրել ՀՀ սոցիալական համակարգի զարգացման մեխանիզմներն ու միջավայրը, որպես ինովացիոն գործընթացների արդյունք:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացներն են: Հետազոտության առարկան ՀՀ սոցիալական ոլորտի ինովացիոն գործընթացների կառավարումն է՝ որպես սոցիալական ինովացիաների խթանման և իրականացման միջոց:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել ժամանակակից և դասական տնտեսագիտության հիմնարար դրույթները, ինովացիոն գործընթացների տեսական և գործնական խնդիրների, սոցիալական ակտիվ միջավայրի ձևավորման, երկրի մրցակցային առավելությունների վերաբերյալ տարբեր հեղինակների, տնտեսագետների, գիտնականների ուսումնասիրությունները: Հետազոտության շրջանակներում տեղեկատվական սկզբնաղբյուր են ծառայել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականության աղբյուրները, միջազգային վիճակագրական տվյալները, պարբերական գիտական հրատարակությունների, գիտական կոնֆերանսների նյութերը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկագրքերը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրատարակված մի շարք տվյալները, վիճակագրական ու վերլուծական նյութերը, Կառավարության որոշումները, ՀՀ օրենքները, Համաշխարհային Բանկի, ֆորումների և այլ միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից հրատարակված պաշտոնական նյութերը:

Ատենախոսության արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսության հիմնական գիտական նորույթը ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացների կառավարման, ներդրման և զարգացման հիմնախնդիրների բացահայտումն է և այդ հիմնախնդիրների լուծման ուղիների ներկայացնելը: Ատենախոսության գիտական նորույթն ամփոփված է հետևյալ գիտական արդյունքներում.

- Մշակվել և ներկայացվել են ՀՀ սոցիալական ոլորտի ինովացիոն գործընթացների զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղղությունները:

- Սոցիալական ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման համար մշակվել է նոր մոդել, որի հիման վրա գնահատվել է սոցիալական ոլորտում բարենպաստ պայմանների, սոցիալական էֆեկտի և ինովացիոն ծրագրերի փոխկապվածությունը:
- Մշակվել է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կիրառման նոր մոդել, որն ուղղված է կազմակերպության կայունությանը, մրցունակության բարձրացմանը և սոցիալական որոշ խնդիրների լուծմանը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ուսումնասիրության տեսական նշանակությունն այն է, որ հետազոտությունում ներկայացված են սոցիալական համակարգի ինովացիոն գործընթացների կարգավորման և կառավարման մեթոդական մոտեցումները, որոնք թույլ են տալիս այդ գործընթացը համակարգել և դարձնել գործնական կիրառման համար տեսական ուղեցույց: Աշխատանքում կատարված վերլուծությունների և տեսական ընդհանրացումների արդյունքում կարևորվում են ինովացիոն գործընթացների դերը, էությունը, առանձնահատկությունները, ուղղությունները, որոնք կարող են ունենալ տեսական ու գործնական կիրառություն ՀՀ սոցիալական ոլորտում: Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ կատարված վերլուծությունները, եզրակացությունները և առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ սոցիալական ոլորտում ինչպես ազգային ինովացիոն տնտեսության ձևավորման, այնպես էլ ինովացիոն ծրագրերի ներդրման, կարգավորման և իրականացման գործընթացում: Սոցիալական ինովացիաների՝ հատկապես կորպորատիվ սոցիալական ծրագրերի միջոցով նվազում են պետական ծախսային բեռն ու պարտավորությունը՝ միաժամանակ մեծացնելով կորպորատիվ հատվածի մրցակցային առավելությունները, ինչը տնտեսության զարգացման գործընթացում ևս մեկ հնարավորություն է ընձեռում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության մեջ ստացված հիմնական արդյունքները քննարկվել ու հավանության են արժանացել ԵԿՏԱ-ի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի նիստերում, ԵԿՏԱ-ի 2013թ. երիտասարդ գիտնականների գիտաժողովում, 2013թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում: Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի գիտական ինը հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքի կառուցվածքը բխում է հետազոտության նպատակից և խնդիրներից: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 134 համակարգչային էջ, պարունակում է 3 աղյուսակ և 21 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը և առարկան, տեղեկատվական ու մեթոդական հիմքերը, հետազոտության գիտական նորույթը, ստացված արդյունքների կիրառական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության **առաջին՝** ***«Սոցիալական ոլորտի ինովացիոն գործընթացների զարգացման տեսամեթոդական հիմքերը»*** գլխում ներկայացվել են սոցիալական ինովացիոն գործընթացների տեսամեթոդական հիմքերը, ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացների առանձնահատկությունները և սոցիալական ինովացիաների ձևավորման և զարգացման ուղղությունները:

Հետազոտությունում ներկայացվել են ինովացիաների վերաբերյալ տարբեր ձևակերպումներ և բնորոշումներ՝ ինչպես գիտական, այնպես էլ իրավական: Ինովացիոն տեսության հիմնադիրներից մեկը՝ Ջ. Շումպետերը, որպես նոր դասակարգիչ, առաջինը գործնական կարևորություն տվեց «ինովացիա» հասկացությանը: Ըստ նրա մրցակցային տնտեսությունում ինովացիան բացատրում է այն երևույթը, որի ազդեցությամբ սուբյեկտները և ընտանիքները սոցիալական աճ կամ անկում են ապրում»[1]: Ըստ Փ. Դրաքերի ինովացիայի հետևանքով առկա միջոցները ֆինանսական նոր ռեսուրսներ ու հարստություն կուտակելու նոր ուժ են ստանում, ինովացիոն գործունեությունը ոչ միայն օժտված է տնտեսական նպատակահարմարությամբ և գնով, այլ նաև ունի որոշակի սոցիալական արժեք[2]: «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում ինովացիան սահմանվում է. «տնտեսական շրջանառության մեջ օգտագործվող, նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացի, նոր կամ կատարելագործված արտադրանքի կամ ծառայության տեսքով իրացում գտած վերջնական արդյունք»: Սոցիալ-տնտեսական գործընթացները «անտեսանելի» են, և իրականացվում են ժամանակին զուգահեռ ու տարածություն մեջ: Նրանք համատեղում են բազմաթիվ օբյեկտներ, սուբյեկտներ, գիտակցության կրողներ, կապեր ու հարաբերություններ, կախված են բնության տարբեր բաղադրիչներից և բնութագրվում են միջակայքայի, բազմագործոնության, բազմաձայրահեղության նշանակության գործառույթներով[3]:

Բոլոր սահմանումներում կարելի է ընդգծել մի ընդհանուր գաղափար, որ ինովացիոն տնտեսության ձևավորումն ապահովում է երկրի կայուն, անվտանգ

---

[1] Шумпетер Й., Пер. Автономова В.С. и др., Вступ. ст. Милейковского А.Г. и Бомкина В.И., Общ. ред. Милейковского А.Г., Теория экономического развития: Москва, Прогресс, 1982, с. 159.

[2] Друкер П., пер. с англ Питер, Бизнес и инновации, Санкт-Петербург, Вильямс, 2007, с. 63.

[3] Ваганян Г. А., Ваганян О. Г., Виртуальные технологии менеджмента (системотехника электронного управления) - Ер., Нжар, 2005, с. 8.

զարգացումն ու մրցունակությունը, տնտեսության և սոցիալական համակարգի գրավչության ձևավորումը:

Սոցիալական ինովացիաների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն օգտագործվում է արտաքին միջավայրի ավելի լայն շրջանակներում՝ կախված ինովացիոն գործընթացում ներգրավված մարդկանց խմբային և անհատական որակներից:

Ուսումնասիրության շրջանակում մեր կողմից առաջարկվում է սոցիալական ինովացիաների առավել ընդգրկուն մեկնաբանում՝ սոցիալական ինովացիաները գիտակցված և գիտականորեն կազմակերպված նոր գործընթաց են՝ սոցիալական աշխատանքի գործնական իրացման ընթացքում, որը ձևավորվում է հասարակության կյանքի որակի բարձրացման և փոփոխվող պայմանների միտումներով՝ նպատակ հետապնդելով իրականացնել արդյունավետ վերափոխումներ սոցիալական համակարգում:

Ինովացիաների կառավարումը հանդիսանում է այն միջոցը, որը հնարավորություն է ընձեռում տարբեր գիտելիքների տեր անձանց համախմբվելու մեկ կազմակերպությունում, որի արդյունավետ աշխատանքը կարող է դիտվել որպես սոցիալական ինովացիա:

Ատենախոսության **երկրորդ՝** ***«Ինովացիոն գործընթացների կառավարման հիմնախնդիրները ՀՀ սոցիալական ոլորտում»*** գլխում քննարկվել են ՀՀ սոցիալական ոլորտի ինովացիոն գործընթացների կառավարման ուղղությունները, սոցիալական ոլորտի ներուժի կառավարումը, ինովացիոն կառավարման և զարգացման ուղղությունները:

Սոցիալական քաղաքականությունը բավականին ծախսատար է և պահանջում է զգալի ներդրումներ: Սոցիալական բևեռացման ցուցանիշներով հետխորհրդային երկրների ցանկում ՀՀ-ն զբաղեցնում է առաջին հորիզոնականներից մեկը, իրականացվող ինովացիայի արդյունավետության և միջավայրի մասին կարելի է պատկերացում կազմել յուրաքանչյուր տարի կազմվող «Գլոբալ նորամուծությունների ինդեքսի» միջոցով[4]: Ըստ Եվրոպական հանձնաժողովի վերլուծության ՀՀ տնտեսության ուժեղ կողմերից են բիզնես սկսելու հնարավորությունները, կապիտալի համախառն կուտակումը, գիտատեխնիկական հրապարակումները և այլն: Թույլ կողմերից են տեղական մրցակցության, տեխնոլոգիաների արտադրության ցածր մակարդակը, համալսարան-արտադրություն հետազոտական համագործակցության բացակայությունը և այլն[5]:

ՀՀ–ում ինովացիոն ծրագրերի ներդրման տեսանկյունից, սոցիալական ոլորտի զարգացման ուղղությունները ներկայացվել է գծապատկեր 1-ում:

---

[4] European Commission «Directorate-General for research and innovation», «Marie Curie actions: where innovative science becomes success», Luxembourg, 2012, p. 69.

[5]European Commission «Directorate-General for research and innovation», «Marie Curie actions: where innovative science becomes success», Luxembourg, 2012, p. 70.

Գծապատկեր 1

Սոցիալական ոլորտի ինովացիոն զարգացման ուղղությունները[6]



Զբաղվածության ցուցանիշը սոցիալական կայունության որոշիչ հիմքն է: ՀՀ-ն չունի արդյունաբերական զարգացման բարձր մակարդակ, ռեսուրսներ, ուստի անհրաժեշտ է իրականացնել սոցիալական ինովացիաներ, որոնք ուղղված կլինեն գործազրկության մակարդակի կրճատմանն ու բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

---

[6] Գծապատկերը կազմվել է մեր կողմից, որտեղ կարևորվել և առանձնացվել են սոցիալական ոլորտի ինովացիոն զարգացման հիմնական ուղղությունները: Գծապատկերը կազմելու համար օգտագործվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև «Լիարժեք կյանք» Հ/Կ-ի հետ համագործակցության շրջանակներում ձեռք բերված տեղեկատվությունը: 2015թ.-ից սկսած ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի, հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության կողմից ընդունվել և գործունեության մեջ են դրվել ինովացիոն զարգացման որոշ ուղղությունները՝ համապատասխան բնագավառում:

ՀՀ համար հեռանկարային ուղղություններ կարող են հանդիսանալ սոցիալական ոլորտում պետական և միջազգային մասշտաբներով ֆինանսական միջոցների ներդրումը: Նմանատիպ քաղաքականությունը կարող է պայմանավորված լինել սոցիալական ինովացիաների առկայության և ՀՀ կառավարության աջակցության դեպքում, քանի որ ՀՀ-ում կան այդ գործընթացը կարգավորելու համար բոլոր անհրաժեշտ նախադրյալները:

Ատենախոսության **երրորդ՝** ***«Ինովացիոն կառավարման մոդելների մշակումը ՀՀ սոցիալական ոլորտում»*** գլխում քննարկվել և ներկայացվել են ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի կառավարման հեռանկարները, միջազգային փորձի կիրառման հնարավորությունները, սոցիալական գործընկերության խթանման ուղղությունները, կառավարման մեխանիզմները և կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը, որպես սոցիալական ինովացիայի ներդրման մոդել:

Սոցիալական ոլորտում կատարվող ներդրումները ցածր շահութաբերություն են ապահովում, և այն դառնում է ավելի քիչ պահանջ ունեցող և դժվար հասանելի[7]: Պետության կողմից սոցիալական ոլորտում ինովացիաների խթանմանն ուղղված միջոցառումներ իրականացվել են մի շարք երկրներում: Մեծ Բրիտանիայում պետության կողմից անհատ ներդրողների համար գոյություն ունի կառավարության կողմից աջակցվող ծրագրեր. պետական հիմնադրամներ, որոնք խրախուսում են ինովացիոն ծրագրերի իրականացումը: Ներդրողների համար սահմանված են հարկային արտոնություններ՝ որպես բարենպաստ պայմանների այլընտրանքային կիրառում[8]: ԱՄՆ-ում անմիջական աջակցություն են ցուցաբերում մասնավոր հիմնադրամներին՝ խուսափելով պետական հիմնադրամներ ստեղծելուց: Նմանատիպ մոտեցումը հիմնավորվում է ոլորտում ոչ շուկայական բնույթի մրցակցությունը կանխելով կամ բացառելով[9]: Հոլանդիայում կիրառվել է Մեծ Բրիտանիայի օրինակը. սկզբում հիմնական շեշտը դրվեց պետական հիմնադրամների ստեղծմանը, սահմանվեցին արտոնություններ, որոնք պետական երաշխիքներ են տրամադրում սոցիալական ինովացիաներ իրականացնելու համար, իսկ Գերմանիայում, Ֆրանսիայում գերակշռող մաս կազմեց հարկային արտոնությունները, ինչի արդյունքում ուղիղ համեմատական կապ նկատվեց պետության կողմից սահմանված բարենպաստ պայմանների և ինովացիոն ծրագրերի իրականացման միջև[10]: 2006թ. «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության կողմից հիմնադրվել է Գլոբսիս ՍՊԸ

---

[7]Կատինյան Ա.Ռ., Ինովացիոն գործընթացների ձևավորումը Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտում, գիրք - Տեղեկատվական Տեխնոլոգիաներ և Կառավարում, Երևան, 2011, էջեր 70-79:

[8] Piotr Tamowicz «Policy towards private equity and venture capital» Polish Private Equity Association., 30/04/2003, pp. 2-4.

[9] OECD Science, Technology and Industry Scoreboard: 2009. Paris: OECD, 2009, p. 50.

[10] Benchmarking European tax and legal environments. The European Venture Capital Association2004, p. 7.

սոցիալական ձեռնարկությունը[11]: Կազմակերպության գործունեությունը դադարել է այն ժամանակ, երբ սպառվել են արտաքին աղբյուրներից ստացվող ֆինանսական միջոցները: Գործունեության դադարման հիմնական պատճառներից են հանդիսացել ոչ բարենպաստ պայմանների առկայությունը:

Նշենք, որ սոցիալական ոլորտում գործող կազմակերպությունը բարձր եկամուտ չեն հետապնդում, ուստի չեն կարող դիմակայել՝ հարկային արտոնությունների բացակայության դեպքում: Արդյունքում ուղիղ համեմատական կապ է նկատվում բարենպաստ պայմանների առկայության և սոցիալական ուղղվածությամբ կազմակերպությունների գործունեության թվաքանակի աճի միջև: Այդուհանդերձ, մեր երկրում այսպիսի փորձերը մնում են մեկուսացված և լայն արձագանք չեն ստանում:

ՀՀ կառավարության կողմից սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի կիրառման ուղղությամբ որպես բարենպաստ պայման կարելի է օգտագործել մասամբ ԵՄ երկրների փորձը, այսինքն, օրենսդրական դաշտի կարգավորմամբ՝ հարկային արտոնությունների սահմանումը, որի միջոցով հարկային պարտավորությունից առաջին մի քանի տարիներին կազատվեն սոցիալական ուղղվածությամբ ծրագրեր իրականացնող կազմակերպությունները[12]: Հետագայում հարկային բեռը կապված կլինի տվյալ կազմակերպության գործունեության ծավալից, կիրառման մասշտաբներից և հետագա ակնկալվող արդյունքներից: Պետության կողմից նմանատիպ աջակցությունը կլինի պայմանով, որ տվյալ կազմակերպությունում ընդգրկված աշխատողների զգալի մասը կազմեն հասարակության խոցելի խմբերին պատկանող անձիք:

Ներկայումս ՀՀ-ի համար պետական հիմնադրամների ստեղծումն իրատեսական չէ, քանի որ այն կառաջացնի զգալի ֆինանսական միջոցների կենտրոնացում: Նշենք նաև, որ ներկա դրությամբ սոցիալական ոլորտում իրականացվող որևէ գործունեությունից հարկային եկամուտների գծով բյուջետային մուտքեր չեն կատարվում, սակայն վերը նշված առաջարկվող այլընտրանքային սոցիալական քաղաքականության կիրառման նոր մոտեցումը կհանգեցնի որոշակիորեն բյուջետային ծախսերի կրճատմանը[13]: Այսպես.

ՀՀ կառավարությունը ընտանեկան նպաստի բազային մասը սահմանում է միջին ամսեկան 16 000 ՀՀ դրամ, այսինքն՝ մեկ տարվա ընթացքում մեկ նպաստառու ընտանիքին պետության կողմից տրամադրվում է 192 000 ՀՀ

---

[11] http://www.fulllife.am/arm/index.php?option=com_content&view=article&id=75&Itemid=27

[12] Կատինյան Ա.Ռ., Միջազգային կազմակերպությունների դերը և սոցիալական ձեռնարկությունների ներդրումը Հայաստանի Հանրապետությունում, գիրք - Հայաստան Ֆինանսներ և Էկոնոմիկա, Երևան, 2012, էջեր 56-57:

[13] Կատինյան Ա.Ռ., Ինովացիոն ծրագրերի ներդրման և կիրառման միտումները ՀՀ սոցիալական ոլորտում, Մխիթար Գոշ, գիտական հոդվածներ, 2016/2 (45), էջեր 309-312:

դրամ[14]: Եթե մեկ ինովացիոն ծրագիր իրականացնող կազմակերպությունում աշխատեն տասը ընտանիքի ներկայացուցիչներ, ապա տարվա կտրվածքով պետությունը կդադարի 1 920 000 ՀՀ դրամ տրամադրելուց: Արդյունքում պետությունը կդադարի խոցելի խմբին պատկանող անձին նպաստի տեսքով ֆինանսական միջոցներ տրամադրելուց, իսկ կազմակերպությունը օգտվելով նմանատիպ արտոնություններից իր շուկայական դիրքը կամրապնդի և կհետապնդի որոշակի եկամուտ: Նմանատիպ տրամաբանությամբ սոցիալական ոլորտում բարենպաստ պայմանների ստեղծման քաղաքականությունը կնպաստի սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի և ձեռնարկությունների ներդրման ու իրականացման աճին, ինչը կապահովի բարձր սոցիալական էֆեկտ:

Սոցիալական ոլորտում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ոլորտում բարենպաստ պայմանների, ակնկալվող շահույթի և ինովացիոն ծրագրերի իրականացման աճը փոխկապակցված են: Սոցիալական ոլորտում բարենպաստ պայմանների ստեղծմամբ ակտիվանում են ինովացիոն ծրագրերի ներդրման գործընթացը, ինչի արդյունքում ստացվող սոցիալական էֆեկտը տատանվում է: Ոչ բարենպաստ պայմանների առկայությունը հանգեցնում է սոցիալական ոլորտում ինովացիոն ծրագրերի ներդրման նվազմանը: Վերջիններիս փոխկապվածությամբ էլ սոցիալական էֆեկտը նվազում կամ աճում է: Այսպես.

$$FM\uparrow \rightarrow IP\uparrow \rightarrow SE\uparrow \text{ կամ } FM\downarrow \rightarrow IP\downarrow \rightarrow SE\downarrow \qquad (1)$$

ՀՀ սոցիալական քաղաքականությունը անհրաժեշտ է ուղղել ինովացիոն ծրագրերի կիրառման համակարգի ստեղծմանը: Այս առումով կարևորվում են ինովացիաների ներդրման, կարգավորման, վերահսկման, իրավական ակտերի վերանայման և զարգացման գործընթացները:

Օրենսդրական դաշտի առկա բացթողումների կարգավորումը կնպաստի և կաջակցի ոլորտում պետական և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի կիրառմանը և ինովացիաների դինամիկ զարգացմանը: Միջազգային համագործակցության արդյունքում կիրականացվեն տարբեր սոցիալական ինովացիաներ: Վերջիններիս կիրառումը որոշակիորեն կլուծի խոցելի խմբերին պատկանող անձանց զբաղվածության խնդիրը, նախատեսված ծրագրերի իրականացման արդյունքում կազմակերպությունը կհետապնդի եկամուտ և այդ միջոցները կներդրվեն նոր ծրագրերի

[14] 30.01.2014թ. «Ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստների չափերը սահմանելու և մինչեվ 2014 թվականի հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման կարգը հաստատելու մասին» 65-Ն ՀՀ կառավարության որոշում:

իրականացման համար կամ միջազգային վարկային միջոցների առկայության տարբերակում՝ կմարվի պարտքը:

Ինովացիոն գործընթացների կարևոր բաղկացուցիչ մաս են կազմում նաև սոցիալական գործընկերությունն ու ԿՍՊ-ն: ԿՍՊ-ը սահմանվում է ինչպես իրավական ակտերով, այնպես էլ տարբեր մասնագետների կողմից: ՌԴ-ում գործում է «Наше будущее» սոցիալական խնդիրների հիմնադրամը, որի հիմնական գործունեությունն ու առաքելությունը ՌԴ-ում սոցիալական գործընկերության զարգացումն է[15]: Մասնագետների կարծիքով ՌԴ-ին անհրաժեշտ է հրաժարվել բարեգործական ակցիաների կամ նմանատիպ այլ միջոցառումների կազմակերպումներից և պետք է իրականացնել երկարաժամկետ ռազմավարության պլանավորում և օրենսդրական կարգավորում[16]:

Գործնականում սոցիալական գործընկերության շրջանակներում միասնական սկզբունքներ գոյություն չունեն: Յուրաքանչյուր երկիր՝ ելնելով իր տնտեսության, սոցիալական, ազգային, պետության զարգացման առանձնահատկություններից ձևավորում է գործընկերության իր ազգային համակարգը: ՀՀ-ում սոցիալական գործընկերության զարգացման և ձևավորման արդի փուլում այս համակարգերն ու սկզբունքները գտնվում են փոփոխությունների ակտիվ գործընթացում՝ հստակորեն ուղղորդվելով դեպի սոցիալական ոլորտ:

Զարգացած երկրներում ԿՍՊ կարգավորման համար տարբեր կազմակերպություններ ստեղծում և կիրառում են ԿՍՊ բաժիններ, վարչություններ, վերլուծական հատուկ կենտրոններ, իսկ տարբեր արևմտյան բարձրագույն ուսումնական հաստատություններում այն դասավանդվում է որպես մասնագիտացման ոլորտ[17]:

ՀՀ-ում վերջին տարիներին միջազգային կազմակերպությունները ակտիվորեն փորձում են շրջանառության մեջ դնել ԿՍՊ գաղափարը՝ որպես բիզնեսի կառավարման արդյունավետ մոդել: 2009թ-ից սկսած ՀՀ կառավարությունը մեկնարկել է պետական, մասնավոր հատվածների միջև գործընկերության կենսունակ մոդելի ստեղծման համար տարբեր միջոցառումներ, որի հիմնական նպատակն է ինչպես համագործակցությունը կառավարության և մասնավոր հատվածի միջև, այնպես էլ բնակչության կարիքների համընկալումը վերջիններիս կողմից[18]:

---

[15] Программа Европейского Союза Europe Aid для Российской Федерации «Социальное партнерство в России» Москва, 2005, с. 20-23.

[16] Программа Европейского Союза Europe Aid для Российской Федерации «Социальное партнерство в России» Москва, 2005, с. 24-25.

[17] Կատինյան Ա.Ռ., Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և կիրառման անհրաժեշտությունը ՀՀ-ում, գիրք-Անանիա Շիրակացի միջազգային հարաբերությունների համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու-1 (13)/Երևան, 2011, էջեր 139-147:

[18]http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69342

ԿՍՊ գաղափարի ներդրումը և զարգացումը փորձում են ակտիվ իրականացնել հայաստանյան որոշ խոշոր կազմակերպություններ, մասնավորապես «ՎիվաՍելլ-ՄՏՍ», «ԱրմենՏել», «Հայռուսգազարդ», «Ամերիաբանկ», «Առէկսիմբանկ» և այլն:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ նման պատասխանատվությունը հասարակության զգալի հատվածի համար, երբեմն, չի տարանջատվում բարեգործությունից: ԿՍՊ-ի ներքո հաճախ հասկացվում են բարեգործական ծրագրերի կամ կամավոր սկզբունքով աշխատանքների իրականացում: Բարեգործությունը և ԿՍՊ-ն միմյանցից տարբերվում են այն հանգամանքով, որ եթե բարեգործությունն ուղղված է որոշ անձանց կյանքի որոշակի բարելավմանը, ապա ԿՍՊ՝ կազմակերպության շահույթ ստանալուն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ պետական և մասնավոր հատվածի սերտ համագործակցության արդյունքում իրականացվում են ԿՍՊ-ի խթանմանն ուղղված տարբեր միջոցառումներ: ԱՄՆ-ում գործում է ինովացիոն հմտությունների զարգացման վարչությունը, որը նախկինում կառավարության կազմում էր՝ որպես ԿՍՊ նախարարություն: Իրենց գործունեության շրջանակներում մշակում են սոցիալական պատասխանատվության համար նախատեսված միջոցառումներ, մրցանակային համակարգեր և ԿՍՊ հարցերով միջազգային ռազմավարական ծրագրեր[19]: Գերմանիայում հարկային արտոնություններ են տրամադրում նաև ԿՍՊ գործունեություն ծավալող կազմակերպություններին[20]:

Ուսումնասիրելով վերոնշյալ երկրների փորձը, նկատվում է, որ նմանատիպ միջոցառումների կազմակերպման հիմնական նպատակը ուղղված է կազմակերպությունների գործունեության խթանմանը: Այս երկրներում հարկային արտոնությունների մշակման շնորհիվ կազմակերպությունները շահագրգռված են կիրառել ԿՍՊ, քանի որ ստացված արդյունքները՝ մարքեթինգային ծախսերի համեմատ, ավելի շոշափելի են, քան ԿՍՊ գծով հատկացված միջոցները:

ՀՀ սոցիալական համակարգի զարգացման համար, որպես սոցիալական պետություն, անհրաժեշտ է խթանել և կիրառել ԿՍՊ-ը: Որպես իրավական կարգավորում և արտոնություն ԿՍՊ խթանման համար մեր կողմից առաջարկվում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ նոր հոդվածի ավելացմամբ, որը կնպաստի ԿՍՊ կիրառմանն ու իրականացմանը, այնպես, ինչպես ներկայումս իրականացվում է բարեգործություն իրականացնելու տարբերակում: Ներկայումս վերոնշյալ օրենքի 23-րդ

---

[19] Her Majesty's Government, Corporate Responsiblity Report 2008, p. 20.

[20] Մարտիրոսյան Ս., Պետրոսյան Ա., մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն, Ռազմավարական ծրագրավորման ուղեցույց քաղաքացիական հասարակության կառույցների համար, Գյումրի, Դպիր, 2008, էջեր 55-60:

հոդվածի համաձայն բարեգործություն իրականացնելու դեպքում շահույթը որոշելիս նվազեցվում է համախառն եկամուտը: Նշենք նաև, որ վերոնշյալ հոդվածով նախատեսված է միայն համախառն եկամտի նվազեցում, սակայն ԿՍՊ կիրառող կազմակերպությունների համար, զարգացած երկրներում առկա են նաև այլ արտոնություններ:

ՀՀ-ի համար որպես կարգավորման ուղղություն կարելի է կիրառել հետևյալ տարբերակը: Եթե գործատուն կատարում է հատկացում ԿՍՊ-ի գծով յուրաքանչյուր աշխատողի համախառն միջին աշխատավարձի 1% չափով՝ 2 000 ՀՀ դրամ (աշխատավարձը դիտարկել 200 000 ՀՀ դրամ), ապա շահութահարկի մասով տրամադրվող հարկային արտոնության առկայության արդյունքում (հատկացված գումարի 50%-ի չափով) նրա խնայողությունը կկազմի 1000 ՀՀ դրամ: Այսինքն՝ գործատուն իր կատարած լրացուցիչ ծախսի՝ 2000 ՀՀ դրամի 50%-ը հետ է ստանում (համախառն եկամտի նվազման արդյունքում):

Այսպես, գործատուի կողմից համախառն միջին աշխատավարձի 1% ԿՍՊ գծով հատկացում կատարելու դեպքում, շահութահարկի գծով արտոնության կիրառման արդյունքում խնայողության ընդհանուր բանաձևը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$S = X - \left(\frac{X * 50}{100}\right) \leq EC \qquad (2)$$

Որտեղ՝ S- խնայողությունն է, EC- հավելյալ ծախսերը, X-ԿՍՊ գծով հատկացումներ:

Վերը նշված հաշվարկը ներկայացվել է յուրաքանչյուր աշխատողի կտրվածքով, քանի որ ԿՍՊ իրականացնում է նաև տվյալ կազմակերպությունում աշխատող անձը կամ անձիք: Այսպես, եթե կազմակերպությունը ԿՍՊ շրջանակներում իրականացնում է ծառատունկ կամ անհատական աջակցություն, նմանատիպ տարբերակներում կարևորվում են կազմակերպությունում ներգրավված աշխատակիցների թվաքանակը: ԿՍՊ-ի համապատասխան ռազմավարության մշակումը, զարգացումն ու իրազեկվածության տարածումը պահանջում է որոշակի ժամանակ, ցանկություն և նվիրվածություն, մարդկային գործոն և ֆինանսական միջոցներ: Արձանագրենք, որ հասարակության զարգացմանը զուգընթաց կազմակերպությունները ԿՍՊ իրականացման ակտիվացման նպատակով, նախընտրում են կիրառել ինովացիոն ստեղծագործական մոտեցումներ, հնարավոր լրացուցիչ ծախսատարությունից խուսափելու նպատակով:

Կառավարության անմիջական միջամտությունը և վերամշակված օրենսդրությունը դրական ազդեցություն կունենա ԿԱՊ կիրառման պրակտիկայում, արդյունավետ կդառնա մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Կազմակերպությունների կողմից բարեգործական սկզբունքով մոտեցումը չի խրախուսվում այն առումով, որ հասարակության զարգացման ու բարեկեցության ուղղությամբ իրական պայմաններ ու հնարավորություններ չեն ապահովվում, արդյունքում նրանք կախվածության մեջ են լինում տրամադրվող օգնությունից և քիչ հնարավորություն են ունենում բարելավել իրենց ներկա կարգավիճակը: Ցանկացած ընկերության մոտեցումը ԿՍՊ-ի նկատմամբ լինելու է կազմակերպության ռազմավարության դրույթներից բխող, առանձնացնելով ԿԱՊ-ին այլ տեսակի գործընթացներից, այնպիսիք ինչպիսիք են՝ բարեգործությունը, առևտրային հովանավորչությունը և այլն:

Հիմք ընդունելով կատարված հետազոտությունները գալիս ենք այն կարծիքին, որ ՀՀ-ում ԿՍՊ-ի զարգացման և կիրառման համար առաջնային է օրենսդրական դաշտի ձևավորումը՝ որպես սոցիալական պետություն: Կառավարության կողմից ԿՍՊ իրականացնող կազմակերպությունների համար արտոնությունների սահմանումը մեծ խթան կհանդիսանա ՀՀ բիզնես միջավայրի համար: Պետության կողմից արտոնություն կարող են սահմանվել ԿՍՊ զգալի հատկացումներ իրականացնող կազմակերպությունների համար: Այսպես.

- հարկային արտոնությունները (հարկվող օբյեկտի, հարկի հաշվարկման կամ վճարման ժամկետի հետաձգում),
- պարտադիր վճարների կամ տուրքերի գծով արտոնությունները,
- պետական, համայնքային կառույցների մատուցած ծառայությունների դեպքում վճարումից ժամանակավոր ազատումը:

Վերոնշյալ արտոնությունների առկայության դեպքում ԿՍՊ կկիրառեն ոչ միայն խոշոր, այլ նաև փոքր և միջին կազմակերպությունները, քանի որ ԿՍՊ-ով զբաղվող ցանկացած տնտեսավարող սուբյեկտ հետապնդում է իր եկամուտը: Ավելին՝ հարկային արտոնությունների լծակն անհրաժեշտ է ինովացիոն գործընթացների և գաղափարական նորացման խթանման համար: Կառավարության դերը անմիջականորեն նպաստում է տնտեսության արդյունավետության բարձրացմանն ու գլոբալ խնդիրների ուղղությամբ համապատասխան լուծումների որոնմանը, սոցիալական ոլորտում առկա հիմնախնդիրների կարգավորմանը, բնակչության սոցիալական կայունացման ու բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

ԿՍՊ-ը դիտարկվում է սոցիալական պետության և ինովացիոն տնտեսության անբաժան տարր: Գիտելիքը, ինովացիան դառնում են ազգային հարստության գլխավոր աղբյուրը: Այս խնդիրների լուծումը պահանջում են երկարաժամկետ և համակողմանի մոտեցումներ, միայն համալիր միջոցառումների շնորհիվ կարելի է հասնել որակական նոր աստիճանի:

Ատենախոսության ***եզրակացություններ և առաջարկություններ*** բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, եզրահանգումներն ու առաջարկությունները.

- Շուկայական համակարգի ժամանակաշրջանում, ինովացիոն տնտեսության ձևավորման համար կարևորվում է պետության դերը, քանի որ պետությունն է մշակում ու ստեղծում ինովացիաների զարգացման պայմանները, ոլորտի ինքնակարգավորիչ մեխանիզմները և ինովացիոն համապատասխան ինստիտուտների միջավայրը:
- ՀՀ-ում սոցիալական ոլորտի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ են ստեղծել արդյունավետ կարգավորող մեխանիզմներ, և սոցիալական ինովացիաների ներդրման ուղղությամբ իրականացնել կոնկրետ քայլեր:
- Ինովացիոն գործունեություն իրականացնելու և սոցիալական ոլորտը բարելավելու համար գերխնդիր է հանդիսանում ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացների կազմակերպումը, բարենպաստ միջավայրի ստեղծումը, նոր մտքի կամ գաղափարի տեղափոխումը գիտությունից դեպի ՀՀ սոցիալական ոլորտ:
- Կազմակերպությունների կողմից սոցիալական ծրագրերի կիրառման մշակույթի ներդրման անհրաժեշտություն է առաջանում: ԿՍՊ-ի բարձրացման միջոցով հնարավոր է սոցիալական ոլորտում իրականացնել այլընտրանքային բարեփոխումներ, միաժամանակ այդ ընկերություններին հնարավորություն տալով ստեղծելու ավելի մրցունակ միջավայր, ինչն էլ խթան կհանդիսանա տարբեր ծրագրեր իրականացնել՝ շուկայում առաջատար դիրք գրավելու համար:
- Ինովացիոն գործընթացը բնորոշվել է հետևյալ կերպ: ՀՀ սոցիալական ոլորտում ինովացիոն գործընթացը առանձին գործառութային փուլերի արդյունքների համալիրն է, որն ընդգրկում է ոլորտային հետազոտություններ և առկա օրենսդրական դաշտի ուսումնասիրություն, ինովացիոն գաղափարների հետազոտություն, մշակում ու ներդնում, կատարելագործված տեխնոլոգիաների ստեղծում և կիրառում, կառավարման նոր մեխանիզմներ, ինովացիոն ծրագրեր, հասարակական պահանջմունքների և հասարակության սոցիալական կայունացման, կենսամակարդակի բարձրացման համար նախատեսված միջոցառումներ, ինովացիոն սոցիալական քաղաքականության մշակում:
- Մեր կողմից ներկայացվել է սոցիալ-տնտեսական համակարգի ինովացիոն գրավչությունը բնութագրող գծապատկեր, որտեղ բաղադրիչներից յուրաքանչյուրն՝ իր առանձնահատկության շնորհիվ, կարող է նախընտրելի կամ առավել գերադասելի լինել արտասահմանյան կամ տեղական ներդրողների համար:
- Սոցիալական ոլորտի ինովացիոն զարգացման հնարավոր ուղղությունները ներկայացվել է համապատասխան գծապատկերով, որտեղ հիմնական գործառույթներ են համարվում՝ ինովացիոն ծրագրերի

ներդրման համար միջոցառումների կազմակերպումը, սոցիալական ոլորտի ծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը, պետական, մասնավոր հատվածի մասնակցությամբ սոցիալական կապիտալի աճի, բնակչության կյանքի որակի բարձրացման ուղղությամբ շարունակական միջոցառումների իրականացումը:

- Մեր կողմից, ներկայացվել է բարենպաստ պայմանների, ինովացիոն ծրագրերի ներդրման և սոցիալական էֆեկտի փոխկապվածությունը: ՀՀ սոցիալական ոլորտում այդ ծրագրերի իրականացումը կախված է սոցիալական ոլորտում առկա բարենպաստ պայմաններից: Ինովացիոն ծրագրերի ներդրման և ոլորտում բարենպաստ պայմանների բարձր մակարդակի առկայությունը հանգեցնում է սոցիալական էֆեկտի տատանմանը:
- Հետազոտության շրջանակներում ներկայացվել են սոցիալական համակարգի կայունացմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացման քայլերի տրամաբանական հաջորդականությունը: Բացահայտվել է նախատեսվող քայլերի ինովացիոն ուղղվածությունը սոցիալական համակարգի զարգացման գործընթացում:
- Սոցիալական գործընկերությունը անհրաժեշտ է դիտարկել տնտեսական, քաղաքական, և բնակչության էվոլյուցիոն փոփոխությունների կատարելագործման տեսանկյունից, քանի որ այն լուծում է բազմաթիվ խնդիրներ և նպաստում գործընկերների կողմնորոշմանը՝ դրական և կառուցողական սոցիալական հարաբերություններ ձևավորելու նպատակով:
- ՀՀ-ում ԿՍՊ-ն դիտվում է որպես կամավորության սկզբունքի վրա հիմնված մոտեցում: Մեր կարծիքով ԿՍՊ-ը և սոցիալական համակարգում սոցիալական գործընկերությունը ապահովում են տարբեր սոցիալական արդյունքներ՝ որոնք ընդգրկում են սոցիալական համակարգի ինովացիոն միջավայրը:
- ԿՍՊ-ը և սոցիալական գործընկերությունը ապահովում են տարբեր սոցիալական արդյունքներ՝ որոնք ընդգրկում են սոցիալական համակարգի ինովացիոն միջավայրը: Սոցիալական ինովացիաների տեսանկյունից այստեղ կարևորվում է սոցիալական համակարգի արդյունավետությունը: Ինովացիան ենթադրում Է տնտեսական և սոցիալական ոլորտի փոփոխություն և գործնականում նոր գործընթացների ձևավորում:

Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները հրատարակված են հեղինակի գիտական հոդվածներում

1. Կատինյան Ա.Ռ., «Սոցիալական քաղաքականության ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2011թ., էջեր 62-69,
2. Կատինյան Ա.Ռ., «Ինովացիոն գործընթացների ձևավորումը Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտում», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2011թ., էջեր 70-79,
3. Կատինյան Ա.Ռ., «Միջազգային կազմակերպությունների դերը և սոցիալական ձեռնարկությունների ներդրումը Հայաստանի Հանրապետությունում», «Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա» Երևան, 2012թ., էջեր 56-57,
4. Կատինյան Ա.Ռ., «Սոցիալական ոլորտի ինովացիոն գործունեության որոշ հիմնախնդիրներ», «Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա» Երևան, 2012թ., էջեր 16-18,
5. Կատինյան Ա.Ռ., «Սոցիալական գործընկերությունը Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտում», «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հանդես, Երևան, 2012թ., ապրիլ-հունիս, էջեր 146-149,
6. Կատինյան Ա.Ռ., «Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և կիրառման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում», «Անանիա Շիրակացի միջազգային հարաբերությունների համալսարան», գիտական հոդվածների ժողովածու-1, Երևան, 2011թ. (13), էջեր 139-147,
7. Կատինյան Ա.Ռ., «ՀՀ սոցիալական ոլորտի զարգացման հիմնախնդիրները և ինովացիոն ներուժի գնահատումը», ԵԿՏԱ-ի գիտական հոդվածների ժողովածու 2(02), Երևան, 2013թ., էջեր 18-22,
8. Կատինյան Ա.Ռ., «Ինովացիոն ծրագրերի ներդրման և կիրառման միտումները ՀՀ սոցիալական ոլորտում», «Մխիթար Գոշ», գիտական հոդվածներ, 2016/2 (45), էջեր 309-312,
9. Կատինյան Ա.Ռ., «Սոցիալական ձեռնարկությունների խթանման ուղղությունները ՀՀ-ում», «Մխիթար Գոշ», գիտական հոդվածներ, 2016/2 (45), էջեր 313-316:

КАТИНЯН АНИ РОМИКОВНА

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ И УПРАВЛЕНИЯ ИННОВАЦИОННЫМИ ПРОЦЕССАМИ В СОЦИАЛЬНОЙ СФЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - “Экономика, управление хозяйством и его сферами ”.
Защита диссертации состоится 13-ого июля 2017 года, в $14^{\underline{00}}$ часов на заседании специализированного совета 060 ВАК РА по экономике, действующего в Европейской образовательной региональной академии, по адресу: 0037, Ереван, ул. Д. Анахта 10.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена выявлению основных проблем формирования и управления инновационными проблемами в социальной сфере РА.

Выбор темы диссертации обусловлен как необходимостью исследования основных проблем управления инновационной деятельностью в социальной сфере РА, так и важностью и актуальностью их решения.

В работе представлены методические подходы к регулированию и управлению инновационными проблемами в социальной сфере, которые позволяют систематизировать этот процесс, превращая его в инструмент практического применения. В рамках диссертационного исследования представлены особенности социальной сферы РА и их взаимосвязь с инновационными процессами. Обоснованы направления и тенденции в развитии инновационных программ социальной сферы РА, в том числе взаимосвязь между социальными инновациями, повышением уровня жизни населения и социальной стабильностью. Представлены возможности и перспективы внедрения инноваций в социальной сфере РА, социальное взаимодействие и корпоративная социальная ответственность как способ внедрения социальной инновации.

Результаты научного исследования позволят сделать реальным внедрение инноваций в социальную сферу РА.

В диссертации обоснована актуальность и важность выдвинутых проблем, представлены задачи и цели исследования, теоретические, информационные и методические основы, объект и предмет исследования, научная новизна и практическое значение, а также объем и структура работы.

Цель исследования состоит в решении текущих проблем в социальной сфере РА на оцнове создания и внедрения социальных инновационных программ. В ходе достижения поставленной цели были решены следующие задачи: выявлены инвестиционные возможности, рассмотреные перспективы в социальной сфере РА, определены направления развития инновационных программ, исследованы возможности социального партнерства, рассмотрены возможности корпоративной социальной ответственности как метода внедрения социальной инновации.

Научная новизна диссертации состоит в выявлении основных проблем внедрения и развития инновационных процессов в социальной сфере РА и в представлении направлений решения этих проблем с помощью программ корпоративной социальной ответственности.

Научная новизна и результаты диссертационного исследования:

- Были разработаны и представлены проблемы развития инновационных процессов и направления их решений в социальной сферы РА.
- Для повышения эффективности управления в социальной сфере была разработана новая модель, на основе которой были оценены взаимосвязи инновационных программ, благоприятных условий и социального эффекта в социальной сфере.
- Была разработанна новая модель корпоративной социальной ответственности, направленная на повышение стабильности, конкурентоспособности организации и решения некоторых социальных проблем.

Проведнные в исследовании анализ и теоретические обобщения позволили выявить роль, сущность, особенности инновационных процессов. Практическая значимость работы заключается в том, что проведённый анализ, выводы и рекомендации могут быть применены в социальной сфере РА с целью формирования национального инновационного хозяйства на базе внедрения, регулирования и реализации инновационных программ.

ANI ROMIK KATINYAN

THE MAIN CHALLENGES OF FORMATION AND MANAGEMENT OF THE INNOVATION PROCESSES IN THE SOCIAL SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA

The Synopsis of the dissertation for the degree of Ph.D in Economics in the specialty 08.00.02. - "Economics, Management of Economy And its Spheres".

Defend of PhD dissertation will take place on July 13, 2017 at 02:00pm, in the meeting of 060 Council of Economics of HCC of the RoA, at European Regional Educational Academy: 10 D. Anhaght Street, 0037 Yerevan.

SUMMARY

The PhD dissertation aims to detection of main challenges of formation and management of innovation processes in the social sphere of the RoA.

Choosing of the dissertation topic is conditioned by the necessity to study the main problems of innovation activities management in the social area of the RoA, as well as by the importance and urgency of their solving.

Methodological approaches to regulation and management of innovation problems in social area are presented in the work that allow to coordinate the process and turning it into practical application tool.

The features of social system of the RoA and their interconnection with innovation processes are presented within the framework of study. The directions and trends in development of innovation programs in social system of the RoA, including the interconnection between social innovations, increasing of population living standards and social stability, are proved. The possibilities and prospect of innovations in the social sphere of the RoA, the social interaction and corporate social responsibility as a mean of social innovation are presented.

The results of scientific research allow to make real the innovations in the social sphere of the RoA.

The dissertation highlights the urgency and relevanceof the raised problems; goals and objectives of the research, theoretical, methodological and informative bases, the subject and the object of the research, scientific novelty and practical significance, as well as the structure and scope of work are presented.

The purpose of the research is solving current problems in the social sphere of the RoA based on creation and deployment of social innovation programs. On the way of the stated problem achievement the following tasks were resolved: the investment possibilities were identified, the prospect in the social sphere of the RoA was considered, the directions of the innovation programs development were determined, the social partnership opportunities were studied, the opportunity of corporative social responsibility as a method of social innovation deployment was considered. The scientific novelty of the thesis is to identify the major problems of installation and development of the innovation processes in the social sphere of the RoA and presenting the ways to solve these problems based on the corporative social responsibility programs.

The scientific novelty and results of the dissertation:

- The issues of innovation development processes and its solutions of the social sphere of the Republic of Armenia had been developed and presented.
- The new model had been developed for increasing the efficiency of the management of social sector on the basis of which favorable conditions in the social sector, social effect and coherence of innovation programs had been estimated.
- The new model of usage of corporate social responsibility had been developed, the aim of which is the stability of the organization, increase of competitiveness, and solving some social issues.

The analysis and theoretical conclusions implemented in the dissertation allowed to reveal the role, essence and features of innovation processes. The practical significance of the dissertation lies in the fact that the analysis, conclusions and recommendations can be used in the social sphere of the RoA with the purpose of formation of the national innovation economy based on deployment, regulation and implementation of innovation programs.